

Սակայն Գրիգոր վրդ. Կեսարացի արդեօք իրապէս իր ծննդավայրը դարձած էր. ասիկա խնդիր մըն է որուն գրական պատասխան մը տալ կարելի չէ վստահութեամբ: Հ. Ներսէս վրդ. Ակիւնեան կը կարծէ թէ 1595ին վարդապետական գաւազան ստանալէ յետոյ հեռացած է Վարդապետէն (ՀԱ. 1933, էջ 164), բայց ո՞ւր գացած է չէ ըսած:

Օրմանեան կը կարծէ թէ 1595էն յետոյ Կեսարիոյ առաջնորդ եղած է (Աղբար, էջ 2310) և անկէ է որ Կ. Պոլիս անցած է(\*):

Սակայն երկու կարծիքներն ալ յենած չեն որևէ վաւերագիրի վրայ:

1595-1601 թուականներուն անիկա չի յիշուիր իբր առաջնորդ Կեսարիոյ ուէ յիշատակարանի մէջ: Իր եղբօրորդին՝ Յակոբ քհնյ. Կեսարացի այս մասին լուռ է և իր գրածէն այնպէս կը հասկցուի թէ անիկա Տիարապէքիրէն ուղղակի Կ. Պոլիս գացած է: Ասոր ուժ կուտայ Յակոբ քհ. Կեսարացւոյ

---

(\*) Օրմանեան նոյն իսկ անոր եպիսկոպոսական ձեռնադրութեան թուականը 1598 նշանակելով (Աղբար, էջ 2310) կերպով մը անոր առաջնորդական պաշտօնավարութեան սկիզբը ճշգրել կը կարծէ, սակայն դիտելի է որ, ինչպէս պիտի տեսնուի, Գրիգոր վրդ. Կեսարացի 1602ին եպիսկոպոս ձեռնադրուած է ո՛չ թէ Կեսարիոյ այլ Կ. Պոլսոյ վրայ: